ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.03.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/14

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Ալիկանտե» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Մ. Եսայանի (լիազորագիր՝ տրված 15.03.2021թ.),

ՀՀ ոստիկանության ներկայացուցիչ Ա. Մնացականյանի (լիազորագիր՝ տրված 16.03.2021թ.),

քննելով ՀՀ ոստիկանության կարիքների համար ավտոմոբիլների վրա տեղադրված էլեկտրական սարքավորումների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2021-ՃՈ/ԷԼՍ-35» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «Ալիկանտե» ՍՊԸ-ի կողմից 09.03.2021թ. ներկայացված (10.03.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/14 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«Ալիկանտե» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Ալիկանտե» ՍՊԸ-ն «հետայսու նաև՝ Ընկերություն» 09.03.2021թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ ոստիկանության կողմից ավտոմոբիլների վրա տեղադրված էլեկտրական սարքավորումների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված N ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2021-ՃՈ/ԷԼՍ-35 ծածկագրով գնանշման հարցման մրցույթին մասնակցության հայտ են ներկայացրել «Ալիկանտե» ՍՊԸ-ն, «Դառես» ՍՊԸ-ն:

Մրցույթը կազմակերպվել է Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դրույթների համապատասխան:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 01.03.2021 թվականի թիվ 4 արձանագրության համաձայն կողմերը հրավիրվել են միաժամանակյա բանակցությունների 04.03.2021 թվականին ժամը 10:30-ին:

Ցանկանում են նշել, որ բանակցությունների ժամկետ, վարմար կարգ կամ նմանատիպ այլ ձևաչափ առկա չի նշվել Պատվիրատուի կողմից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.03.2021 թվականի N 5 արձանագրության համաձայն՝ վերոնշյալ օրը տեղի են ունեցել միաժամանակյա բանակցություններ, որին ներկա են գտնվել «Ալիկանտե» ՍՊԸ-ն և «Դառես» ՍՊԸ-ն: Բանակցությունների վերջնաժամկետը սահմանվել է ժամը 11:10-ին, որի ժամանակ «Ալիկանտե» ՍՊԸ-ի կողմից գնի նվազեցում է կատարվել 274 000 դրամ, իսկ «Դառես» ՍՊԸ-ն 273 000 դրամ:

Ժամը 11:10-ին «Ալիկանտե» ՍՊԸ-ի կողմից գնի նվազեցում է կատարվել 273 000 դրամ, որը հանձնաժողովի կողմից չի ընդունվել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Դառես» ՍՊԸ-ին:

Արձանագրությունը ստորագրվել է հանձնաժողովի երկու անդամների կողմից, իսկ հանձնաժողովի նախագահը չի ստորագրել արձանագրությունը, բայց նշվել է որ նա մասնակցում է բանակցությունների նիստին:

«Ալիկանտե» ՍՊԸ-ի կողմից 2021-03-05 գրություն է ուղարկվել ՀՀ ոստիկանություն և խնդրել եմ ներկայացնել բանակցությունների նիստի ձայնագրությունը կամ տեսաձայնագրությունը, սակայն մինչ բողոք ներկայացնելը պատասխան չի ստացվել:

Պատվիրատուի կողմից 2021-03-05 12:43:04-ից մինչեւ 2021-03-10 18:00:00 ժամը ներառյալ հրապարակվել է «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2021-ՃՈ/ԷԼՍ-35» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին տեղեկատվություն:

Հանձնաժողովի արձանագրությունը և որոշումը կայացվել է Օրենքի խախտումներով, ինչը չի բխում ՀՀ գործող օրենսդրության պահանջներից: Այսպես խախտվել է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 26-րդ հոդվածի 1-ին մասի 5)-րդ կետով և 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1)-ին կետով սահմանված պահանջները:

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված է, որ.

«2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.»:

Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 5)-րդ կետով սահմանված է, որ.

«1. Պատվիրատուի ղեկավարի հրամանով ձևավորվում է գնահատող հանձնաժողով, որը՝

5) որոշում է գնման ընթացակարգի հաղթողին (հաղթողներին):»:

Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1)-ին կետով սահմանված է, որ.

«2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով»:

ՀՀ կառավարության 04.05.2017թ., թիվ 526-Ն որոշման 26-րդ կետի 5)-րդ ենթակի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի նիստերը տեսաձայնագրվում կամ ձայնագրվում և արձանագրվում են, և յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը: Արձանագրությունը գնման ընթացակարգի արձանագրության անբաժանելի մասն է:

Կարգի 40-րդ կետի 5)-րդ ենթակետով սահմանված է, որ.

«40. Հայտերի բացման և գնահատման նիստում՝

հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման հայտով սահմանված գինը, որոշվում ու հայտարարվում են ընտրված և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները:

Կարգի 40-րդ կետի, 6-րդ ենթակետ /է/ պարբերության համաձայն՝ բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը, կամ նվազագույն գները հավասար են, գնման ընթացակարգն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած, բացառությամբ սույն ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված դեպքի:

Այսպիսով հայտնում եմ, որ ոչ բանակցությունների հրավիրելու թիվ 4 արձանագրությամբ, ոչ էլ բանակցությունները սկսելիս բանակցությունների վերջնաժամկետի հետ կապված որևէ նախապայման նշված չի եղել: Ներկա մասնակիցների հերթով կատարել են գների նվազեցում: Ընթացքում որոշում է կայացրել բանակցությունների վերջնաժամկետի հետ կապված, սահմանափակելով այն ժամը 11:10: Նշված որոշմանը «Ալիկանտե ՍՊԸ»-ն չի տվել իր հանաձայնությունը:

Ցանկանում եմ նաև հայտնել, որ «Ալիկանտե» ՍՊԸ-ն արդեն երկար տարիներ հանդիսանում է տվյալ ոլորտում մասնագիտացված կազմակերպություն, վերջին վեց տարիներին հենց «Ալիկանտե» ՍՊԸ-ն է պատշաճ և ժամանակին մատուցել վերոնշյալ ծառայությունները, հանդիսանում է սպասարկվող սարքավորումների միակ պաշտոնական ներկայացուցիչը ՀՀ-ում»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է պարտավորեցնել «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2021-ՃՈ/ԷԼՍ-35» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. Դադարեցնել 04.03.2021թ. թիվ 5 արձանագրությունը,
2. «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2021-ՃՈ/ԷԼՍ-35» ծածկագրով հայտարարված ընթացակարգը հայտարարել չկայացած,
3. Պահանջի 2-րդ կետը չբավարարելու դեպքում՝ նշանակել նոր բանակցություններ:

«Ալիկանտե» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 16.03.2021թ. ժամը 09:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված բողոքը:

2. <u>ՀՀ ոստիկանության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 16.03.2021թ. ժամը 09:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով նիստի ընթացքում հայտնել է հետևյալը.

«Նախևառաջ անդրադառնանք այն հանգամանքին, որ գնումների բաժնի պետը համակարգող չի համարվում, ներկա եմ եղել նիստին և նիստի սկզբում միջամտել եմ և սահմանել պահանջ, որ սահմանվի մի թիվ, որ գների նվազեցում կատարելիս այդ թվից ցածր գին չառաջարկվի, իսկ հետո իմ կողմից սահմանվել է բանակցությունների անցկացման ժամկետ, քանի որ «Դառես» ՍՊԸ-ն բարձրաձայնում էր մի թիվ, որից հետո «Ալիկանտե» ՍՊԸ-ն կրկնում էր նույն թիվը, մի քանի անգամ նախազգուշացրել եմ, որ այդպես չանի, բառացիորեն շեշտել եմ, որ եթե առաջարկվում է, ենթադրենք, 275.000 դրամ, պետք է առաջարկել 274.000, պետք չէ ներկայացնել հավասար թիվ: Ընկերությունների կողմից առարկություններ չեն ներկայացվել: Հասել ենք 273.000 դրամին, «Դառես» ՍՊԸ-ի կողմից 273.000 դրամի գնային առաջարկը ներկայացվել է 11:10 րոպեին, որից հետո «Ալիկանտե» ՍՊԸ-ն կրկին ներկայացրել է նույն թիվը, բանակցությունները հասել են ավարտին և առաջարկված գինը չի ընդունվել: Հայտնեց նաև, որ ի սկզբանե որոշված չի եղել, որ 11:10 բանակցությունները պետք է ավարտվեն, բայց նիստի ընթացքում, քանի որ անընդհատ նույն գինն է առաջարկվել և նիստը երկարել է, 7 րոպե առաջ որոշվել նիստի վերջնաժամկետ նշանակել ժամը 11:10-ին: Այնուհետև, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի այն հարցին, արդյո՞ք հանդիսանալով գնումների բաժնի պետ, մասնակցել է նիստին և կարգավորել միաժամանակյա բանակցությունների գործընթացը, հայտնեց, որ որպես բաժնի պետ ներկա է եղել և երբ նկատել է, որ թվերը կրկնվում են, միջամտել է և սահմանել նիստի ավարտի ժամը և խնդրել չկրկնել նույն թվերը: Ինչպես նաև նշեց, որ գնահատող հանձնաժողովի նախագահը ներկա չի եղել, արձանագրության մեջ նշվել է սխալմամբ: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի այն հարցին, որպես ով է մասնակցել նիստին, հայտնեց, որ որպես գնումների բաժնի պետ և կրկին շեշտեց, որ միջամտել է և խնդրել չկրկնել նույն թվերը»:

3. <u>ԳԲՔԱ-ՆԳ-2021/14 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2021/14 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ոստիկանության կարիքների համար ավտոմոբիլների վրա տեղադրված էլեկտրական սարքավորումների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2021-ՃՈ/ԷԼՍ-35» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

2. «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2021-ՃՈ/ԷԼՍ-35» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում կազմակերպված միաժամանակյա բանակցությունների վերաբերյալ նիստը կայացել է 2021 թվականի մարտի 04-ին՝ ժամը 10:30-ին, որի վերաբերյալ կազմվել է թիվ 5 արձանագրությունը:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Ալիկանտե» ՍՊԸ-ի կողմից 09.03.2021թ. ներկայացված բողոքը, Պատվիրատուի ներկայացուցչի կողմից 16.03.2021թ. ժամը 09:50-ին հրավիրված նիստի ընթացքում ներկայացված դիրքորոշումը և գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 26-րդ կետի համաձայն՝ պայմանագրի կնքման գործընթացը կազմակերպելու նպատակով սույն կարգի 25-րդ

կետով նախատեսված գրավոր հանձնարարականը կամ գնման հայտն ստանալուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում գնումների համակարգողը կազմում և գրավոր պատվիրատուի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում գնահատող հանձնաժողով ձևավորելու մասին հրամանի նախագիծը, որը պատվիրատուի ղեկավարի կողմից հաստատվում է երկու աշխատանքային օրվա ընթացքում: Գնահատող հանձնաժողովի՝

1) կազմը բաղկացած է առնվազն երեք անդամից և ունի նախագահ ու քարտուղար, որոնք սահմանվում են հանձնաժողովի կազմավորման մասին ակտով: ***<u>Հանձնաժողովի նիստին նախագահի մասնակցության անհնարինության դեպքում նիստը նախագահում է ըստ հանձնաժողովի կազմում ընդգրկման առաջնահերթության նախագահի թեկնածուից հետո նշված՝ նիստին ներկա հաջորդող թեկնածուն.</u>***

2) գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով: Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է հանձնաժողովի անդամների երկու երրորդը: Հայտերի բացման նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են հանձնաժողովի քարտուղարը և հանձնաժողովի առնվազն երկու անդամ.

3) նիստն իրավազոր չլինելու դեպքում դրա մասին հայտնի դառնալու պահին քարտուղարը գրավոր զեկուցում է պատվիրատուի ղեկավարին, որը հետևյալ հաջորդականությամբ՝

ա. ոչ ավելի, քան երկու աշխատանքային օրով կասեցնում է գնման գործընթացը,

բ. ապահովում է տվյալ անդամի ներկայանալը հանձնաժողովի նիստին կամ տվյալ անդամի փոխարեն, պատասխանատու ստորաբաժանման առաջարկության հիման վրա, նշանակում է հանձնաժողովի նոր անդամ,

գ. սահմանում է նիստի անցկացման օրը և ժամը, որը չպետք է ուշ լինի գնման ընթացակարգի կասեցման վերջնաժամկետից.

4) որոշումը համարվում է ընդունված, եթե այդ որոշմանը կողմ են քվեարկել հանձնաժողովի նիստին ներկա անդամների կեսից ավելին: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք և քվեարկում է կողմ կամ դեմ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի, իսկ նրա բացակայության դեպքում նիստը նախագահողի ձայնը վճռորոշ է.

5) ***<u>նիստերը տեսաձայնագրվում կամ ձայնագրվում և արձանագրվում են</u>***, և յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և

քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը: Արձանագրությունը գնման ընթացակարգի արձանագրության անբաժանելի մասն է.

6) անդամները և քարտուղարը պարտավոր են ապահովել մասնակիցների կողմից որպես գաղտնի նշված տեղեկությունների գաղտնիությունը և Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում դրանց հրապարակման հետևանքով մասնակիցներին պատճառված վնասի համար՝ բացառությամբ օրենքով նախատեսված՝ պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունների.

7) արտահերթ նիստը հրավիրում է քարտուղարը՝ պատվիրատուի ղեկավարի գրավոր հանձնարարությամբ կամ հանձնաժողովի անդամների առնվազն մեկ երրորդի գրավոր պահանջով՝ նրանց նշած ժամկետում և օրակարգով: Արտահերթ նիստ հրավիրելու, դրա օրակարգի և ժամկետի մասին քարտուղարը նիստից առնվազն վեց ժամ առաջ գրավոր կամ էլեկտրոնային եղանակով տեղյակ է պահում հանձնաժողովի անդամներին.

8) անդամի կամ քարտուղարի կողմից իր պարտականությունների չկատարումը, ***<u>ինչպես նաև հանձնաժողովի անդամ չհանդիսացող պաշտոնատար անձի՝ հանձնաժողովի գործունեությանը միջամտությունը հանգեցնում են այդ անդամին (պաշտոնատար անձին) Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու նպատակով միջոցների ձեռնարկմանը</u>***.

9) անդամը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների, ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար.

10) յուրաքանչյուր անդամ գնահատում է ներկայացված հայտերը և դրանց գնահատման արդյունքներն արտացոլում է գնահատման թերթիկներում և իր ստորագրությամբ հաստատում դրանք:

Այսպես, ՀՀ ոստիկանության կարիքների համար ավտոմոբիլների վրա տեղադրված էլեկտրական սարքավորումների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2021-ՃՈ/ԷԼՍ-35» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

«ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2021-ՃՈ/ԷԼՍ-35» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում կազմակերպված միաժամանկյա բանակցությունների վերաբերյալ նիստը կայացել է 2021 թվականի մարտի 04-ին՝ ժամը 10:30-ին, որի վերաբերյալ կազմվել է թիվ

5 արձանագրությունը:

Այսպիսով՝ անդրադառնալով Պատվիրատուի կողմից դիրքորոշմամբ ներկայացված փաստական համգամանքներին՝ հարկ եմ համարում հայտնել հետևյալը.

Պատվիրատուի ներկայացուցիչը բողոքի քննության նպատակով 16.03.2021թ. ժամը 09:50-ին հրավիրված նիստի ընթացքում հայտնել է, որ ի սկզբանե չի սահմանվել բանակցությունների նիստի վերջնաժամկետ, սակայն, քանի որ նիստի ընթացքում անընդհատ նույն գինն է առաջարկվել և նիստը երկարել է, 7 րոպե առաջ որոշվել է նիստի վերջնաժամկետ նշանակել ժամը 11:10-ին: Այնուհետև, ***Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի այն հարցին՝ արդյո՞ք, հանդիսանալով գնումների բաժնի պետ, մասնակցել է նիստին և կարգավորել միաժամանակյա բանակցությունների գործընթացը, հայտնել է, որ որպես բաժնի պետ ներկա է եղել և երբ նկատել է, որ թվերը կրկնվում են, միջամտել է և սահմանել նիստի ավարտի ժամը և խնդրել չկրկնել նույն թվերը, իսկ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի այն հարցին, թե որպես ո՞վ է մասնակցել նիստին, հայտնել է, որ որպես գնումների բաժնի պետ և կրկին շեշտել, որ միջամտել է և խնդրել չկրկնել նույն թվերը:***

Նիստի ընթացքում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից Պատվիրատուի ներկայացուցչին ներկայացվել է պահանջ՝ միաժամանկյա բանակցությունների նիստի տեսաձայնագրությունը կամ ձայնագրությունը տրամադրելու վերաբերյալ, ***որի ուսումնասիրության արդյունքում ևս հաստատվել է Պատվիրատուի ներկայացուցիչ Ա. Մնացականյանի՝ միաժամանակյա բանակցությունների նիստին ներկա գտնվելու և նիստի ընթացքին միջամտելու փաստը:***

Այսպիսով՝ հիմք ընդունելով Պատվիրատուի ներկայացուցչի 16.03.2020թ. նիստի ընթացքում հայտնած դիրքորոշումը, ինպես նաև ուսումնասիրելով 04.03.2021թ. հրավիրված միաժամանակյա բանակցությունների նիստի տեսաձայնագրությունը՝ արձանագրում եմ, ***որ Պատվիրատուի ներկայացուցիչ Ա. Մնացականյանը, հանդիսանալով գնումների բաժնի պետ, մասնակցել է միաժամանակյա բանակցությունների անցկացման նպատակով հրավիրված նիստին և նիստի ընթացքում համակարգել է ամբողջ գործընթացը, սահմանել նիստի վարման կարգը, մասնավորապես՝ սահմանել է նիստի վերջնաժամկետ և այն թիվը, որից ցածր գնային առաջարկ չէր կարող ներկայացվել, որպիսի իրավասությամբ վերջինս օժտված չի եղել:***

Ուստի գտնում եմ, որ «Ալիկանտե» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Ալիկանտե» ՍՊԸ-ի կողմից 09.03.2021թ. ներկայացված բողոքը բավարարել.

Պարտավորեցնել «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2021-ՃՈ/ԷԼՍ-35» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում՝

1. գնահատող հանձնաժողովի 04.03.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշումը դադարեցնելու վերաբերյալ

2. առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ միաժամանակյա բանակցություններ վարելու նոր նիստի օրվա և ժամի մասին:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**